

ՖՈՒՆԿՑԻԱ


§ 1. ԹՎԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ: ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԳՐԱՖԻԿ

2. Ֆունկցիայի գրաֆիկ


Նկ. 1-ում պատկերված է $y = [x]$ ֆունկցիայի գրաֆիկը, իսկ նկ. 2-ում՝ $y = \{x\}$ ֆունկցիայի գրաֆիկը:

Որպեսզի կորոդինատային հարթության տվյալ ենթաբազմությունը լինի մի որևէ ֆունկցիայի գրաֆիկ, անհրաժեշտ է, որ այդ ենթաբազմությունն Oy առանցքին զուգահեռ ցանկացած ուղղի հետ ունենա մեկից ոչ ավելի ընդհանուր կետ:


Երբեմն ֆունկցիան տալիս են գրաֆիկորեն՝ ներկայացնում են նրա գրաֆիկը: Այդ դեպքում որոշման տիրույթի ցանկացած x_0 -ի համար հեշտ է գտնել ֆունկցիայի համապատասխան y_0 արժեքը (իհարկե, մոտավոր ձգգրտությանը) (նկ.3):



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3